բանց նոր հիմնած դպրոցը Էջմիածնի սեռ-ոի հովանաւորութեան տակ։ Գրիգորի դպրոցը դժբաղդաբար երկար գոյութիւն չունեցաւ, չը կարողանալով մրցել Մուրադեան դպրոցի հետ։

Իր նոր դպրոցը կառավարելու աշխատանքների մէջ, հայր Գաբրիելը բաւական ժամանակ էր ծախում մի շաբաթաթերթ հրատարակելու համար։ 1855 թուին նա հիմնեց Փարիզում մի թերթ «Մասեաց Ադաւնի» անունով, որ լոյս էր տեսնում երկու լեզուներով՝ ֆրանսերէն և հայերէն։

Ազնիւ հանրաւորական եկեղեցու վերադարձած, Գաբրիել Ալյազօվսկի շարունակեց իր մանկավարժական և լրագրական զորձունէութիւնը իր հայրենի քաղաքում, Թէոդոսիայում, կառավարելով Խաչիրեան դպրոցը և հրատարակելով «Մասեաց Ադաւնի» շաբաթաթերթը։

Երբ Խաչիրեան դպրոցը փակվեցաւ, Ալյազօվսկի շարունակեց ապրել Թէոդոսիայում որպէս մասնաւոր մարդ, մինչև որ այժմեան Կաթողիկոսի օրով նշանակվեցաւ նախ Էջմիածնի ձեռագրաց տեսուչ և ապա թեմական առաջնորդ Թիֆլիսում։

Ալյազօվսկու գրական աշխատութիւնների գլխաւորները սրանք են։ Դեռ 1836 թուին նա հրատարակեց Վենետիկում «Ռուսաստանի համառօտ պատմութիւնը», յետոյ «Օսմանեան պետութեան պատմութիւնը» (2 հատոր), իսկ իր ուսուցիչ հայր Աւետիսի հետ աշխատակցութեամբ, նա հրատարակեց (1836 –1837) երեսի հայոց ակադեմիական «Բառարան» (2 հատոր, իւրաքանչիւրը 1000 երեսից աւելի), նա ծանօթութիւններով հարստացրեց հայոց պատմագիրների ժողովածուն, որ հրատարակվեցաւ Վենետիկում իտալերէն լեզուով։ Նրա աշխատութեանը պարտական ենք և Ռուսաստանի աշխարհագրագիրներով, որոնք տաս տախտակներից բաղկացած մի աշխարհագրական ժողովածու են կազմում (Փարիզում տպված)։

Կը յիշենք Ալյազօվսկու թարգմանութիւններից նրա գեղեցիկ թարգմանութիւնը Կրիլովի առակների և նոյնպէս նրա թարգմանութիւնը Եանոսի նամակների Հռոմի պապի դէմ։

Ալյազօվսկու ոճը շատ հարուստ է և հայագէտներից շատերը պնդում են որ նրա գրաբառ լեզուն, իր գեղեցկութեան կողմից, նմանվում է մեր ոսկեայ դարի, հին զորոդ դարի ոճոս գրաբառ լեզուին։

Մահը խլեց մեզանից մի հոգեւոր գիտնական մարդուն, երբ այդ նշանաւոր հայագէտը և հայասէրը մեծ դեր կարող էր խաղալ եկող 1881 թուին Թիֆլիսում լինելու հնագիտական ժողովի մէջ։

Գ. Ա.

ԲԱՆՏԵՐԻ ԽՆԴԻՐԸ

«Polit. Corresp.» լրագրին Ս. Պետերբուրգից գրում են Կարգապրող Բարձր Մասնաժողովի մասին հետեւեալը։

«Կոմս Լօրիս-Մելիքովի առանձին հոգացողութեան գլխաւոր առարկան բանտերի խնդիրն է։ Վաղուց արդէն ամենը խոստովանում են, որ Ռուսաստանի բանտերը չեն համապատասխանում քրէական իրաւագիտութեան առաջադիմութեանը և պետական բանտերի այսպիսի կազմակերպութեան ժամանակ յանցաւորների կալանաւորելը չէ հասնում այն նպատակներին, որոնց դասաւորը ի նկատի է ունենում և ցանկանում է։ Ներքին գործերի մինիստրութենից դեռ մի քանի տարի առաջ նշանակված մասնաժողովը հիմնաւորապէս զբաղվեցաւ այդ հարցով, բայց մինչև այժմ չը կարողացաւ նրան գտնել, որ խստորապէս այն պատճառով, որ այդ խնդիրը կապված է Սիբիր արտաքսելու հարցի հետ։ Կարգադրող Բարձր Մասնաժողովի նախագահը ցանկանում է այժմ այդ երկու խնդիրներով միասին զբաղվել և նրանց այնպէս գտնել, որ «անցաւոր բանտերը» բոլորովին փակվեն և որ արտաքսելու եղանակը արմատական փոփոխութիւններ ենթարկվի։ Բացի այդ դրանց վերաբերեալ քրէական օրէնքները պէտք է փոխարինվեն այնպիսի Ռարերով, որոնք համապատասխան լինէին թէ գիտութեան պահանջներին և թէ դրական պէտքերին։ Գեներալ-ադիւտանտ Տիմաշով, ներքին գործերի նախկին մինիստրը, որ այդ գործի մէջ լաւ փորձված է, կամաւորապէս առաջարկել է կոմս Լօրիս-Մելիքովին իր աջակցութիւնը։ Երևի նրա նախագահութեամբ մի մասնաժողով կը նշանակվի, որ կը վերի Ռուսաստանի համար այդ կարեւոր խնդիրը։»

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

Մարտի 17-ին

Վանայ սովատանջ ազգայնոց արձագանք լսելի եղաւ մինչև Ռուսաստանի խորերն, ես առաւել թափանցեց իմ սրտի մէջ, ուստի խնդրելով օգնութիւն տառապեալց Վանայ, հաւաքեցի 501 բուրլի և անհապաղ ուղարկեցի մեզ, և դուք հաստատեցէք սովատանջներուն, ինդրեմ ապարդիւ նուիրատուների անուանք պատասխան «Մշակի» մէջ։ Ստեփան Յէր-Կարապետեան 50 ր., Մկրտիչ Սալիքեան 50 ր., Աւագ Բախալով 25 ր., Գէորգ Գրաչկինքով 25 ր., Յոհաննէս Խալբախեան 15 ր., Կարապետ Զուչորեան 13 ր., Գասպար Սալթիքեան 10 ր., Պաղտասար Խաչկուռոզով 10 ր., Մինաս Մինասեան 10 ր., Օհանէս Արիկով 10 ր., Կարապետ Խալտերցիով 10 ր., Միքայէլ Զաւրիսեան 10 ր., Կարապետ Խիրիտարեան 10 ր., Գէորգ Աստաշեան 10 ր., Սերովբէ Անանեան 5 ր., Պետրոս Խոմասեով 5 ր., Ս. Յարութիւնեան 5 ր., Խաչատրոս Բանամարեվ 5 ր., Նազարէթ Պաղտասարեան 5 ր., Գրիգոր Օգանեով 5 ր., Գասպար Մասեան 5 ր., Գէորգ Խանզադեան 5 ր., Բերսաբէ Նալպանտովայ 5 ր., Յոհաննես Զալալեան 5 ր., Մարգարիտ Խաչիզով 5 ր., Սուեփան Զաքիմեան 5 ր., Միհէն Պալալանով 5 ր., Մարտիրոս Քուչեցով 5 ր., Կարապետ Քանաթիկցի 5 ր., Կարապետ Խնձորով 5 ր., Կենդեղուլով և Շաբշնիքով 5 ր., Սարգիս Տոնիկով 5 ր., Մարիամ Զուչորովա 3 ր., Գրիգոր Արծաթպանեան 3 ր., Մանուկ Զալալեարով 3 ր., Գէորգ Բոբով 3 ր., Լուսեղէն Բոբով 3 ր., Գաբրիել Զաքմախով 3 ր., Եղիայ Խոնասպկով 3 ր., Յարութիւն Խաչատրաչեվ 3 ր., Եղիայ Խաչատրաչեվ 3 ր., Գրիգոր Խաչատրաչեվ 3 ր., Կարապետ Յարութիւնեան 3 ր., Յարութիւն Զաքիմեան 3 ր., Մարտիրոս Քուչարեան 3 ր., Գրիգոր Բոբով 3 ր., Պետրոս Զուրաեան 3 ր., Աւագեան Պաեվ 3 ր., Ռափաէլ Պասկանեան 2 ր., Կարապետ Վարդապարեան 2 ր., Մանվել Ազատեան 2 ր., Աստվածատուր Աստատուրով 2 ր., Աւետիք Աւետիկով 2ր., Գէորգ Բաղանիկցի 2 ր., Միքայէլ Պալխանիան 2 ր., Թեոդ Շահինեան 2 ր., Յոհաննէս Արզարով 2 ր., Խաչատուր Յոհաննեան 1 ր., Պետրոս Զուչով 1 ր., Սաեփանոս Ռաժիվինքով 1 ր., Գալուստ Ռեշեեվ 1 ր., Աստատուր Աբրիով 1 ր., Պետրոս Խաչայեվով 1 ր., Խաչատուր Արմենեան 1 ր., Կարապետ Բանամարով 1 ր., Նիկողոս Մերժանով 1 ր., Մրգիթ Թերզիեվ 1 ր., Սարգիս Տրդատեան 1 ր., Պողոս Սատրեան 1 ր., Մանիել Զուպանով 1 ր., Մարգիս Հիպիլով 1 ր., Վարդերես Խաչիկեան 1 ր., Պետրոս Շլթով 1 ր., Վարդերես Վարդերեսեան 1 ր., Անոյշ սմն 1 ր., Արութին Աւարիով 1 ր., Գէորգ Խաչատեան 1 ր., Երեմ Աբրահամով 1 ր., Կարապետ Խաչիկուռով 1 ր., Մինաս Միսեերով 1 ր., Մանուկ Խաչապեան 1 ր., Գրիգոր Թաշիեվ 1 ր., Խաչատուր Մոլթաքով 1 ր., Մարգար Քանաքիկցի 1 ր., Կարապետ Շահազով 1 ր., Խաչատուր Շահնազարով 1 ր., Պետրոս Խաչիզով 1 ր., Գէորգ Տիրիկերով 1 ր., Ստեփան Մերզանով 1 ր., Ցակոբ Անանով 1 ր., Կարապետ Ցիպլով 1 ր., Խաչատուր Բոբով 1 ր., Մելքոն Չէրքեզով 1 ր., Կարապետ Ազանով 1 ր., Կարապետ Խալայեվով 1 ր., Գաբրիել Մելքոնեան 20 ր., Ցակոբ Զորչորով 5 ր., Գաբրիել Տրապզոնցեան 5 ր., Պարոն Դուզուպեան 5 ր., Գասպար Բատչեան 2 ր., Դանիել Չերքեզով 1

այսպիսի անկարգութիւններ չը պատահեցան, բայց դարձեալ ծերունու որպիները սաստիկ տանջվեցան, մինչև կարողացան իրանց անամօթ հիւրերի այս և այն պահանջներին բաւականութիւն տալ։

Ցիմնապետը և թօմաս Լիֆէնդին ճաշում էին օդագի մէջ երկուսը միասին։ Ներուն մանուկները նրանց սեղանատեղի փռաց, և սպասաւորի նման մնաց ոտքի վրա, դրանով կամենալով ցոյց տալ իր տիրերին մի առանձին պատիւ։ Ներուն որդիները ծառայում էին գինուորների սեղանի չուրջը։ Ամենամանկ արարը և տանուտէրի խոհանոցի առաջ խոտրիկները զբաղեցրին նրանց, Այդ դէպքից օգուտ քաղելով, ծերունին մտաց Սաառին և ծածուկ ասաց նրան։

—Զուակս, ուռ այդ բալանները և տանը ինչ լաւ բան որ կայ, բոլորը թաղցրու, դու խս իմանում ես, թէ որտեղ պէտք է թաղցնել։

—Իմանում եմ.... պատասխանեց խեղճ կինը և նրա աչքերը լցվեցան արտասուքով։ Այդ նախագգուշութիւնը ապրելն նշան էր, որ սպասնում է մի մեծ վտանգ։

—Լաւ, և սիրդ պինդ պահիր, չարունակեց ծերունին,—մեր տունը չատ անգամ տեսել է այսպեսակ փորձանքներ։ Աստուծով բոլորը կանցնի, միայն պէտք է համբերութիւն ունենալ։ Խելէնները թաղցնելուց յետոյ հարսներին երեխաների հետ կուղարկես իրանց ծնողների տները, իսկ դու Լալային քեզ հետ վեր առնելով, կը գնաս մեր քաւոր Ջաքօի տունը, այնտեղ կը մնաք, մինչև տեսնենք, թէ ինչով կը վերջանայ այդ փորձանքը։

Ներուն հարսներից ոմանք Ս...գիւղացի էին, իսկ մի քանիսը մերձաւոր գիւղերից, այս պատճառով, նրանց առժամանակ իրանց ծնողների մօտ պատսպարվելը դժուար չէր։ Միայն Սաառն հեռու տեղից էր բերված. նրա ծնողները գտնվում էին Բայազէթում, դրա համար ծերունին առաջարկեց նրան քաւոր Ջաքօի տունը, որի վրա մեծ հաւատարմութիւն ունէր։

—Մի բան էլ կայ, լսիր, Սաառ, չարունակեց ծերունին,—Հայրապետը, Ագօն և Վարդանը առաւօտեան գնացին պ. Դուզուկէանին որոնելու։ Նրանք, երևի, չը գիտեն, թէ ինչ է պատահել մեզ հետ, տուն կը վերադառնան և իրանք էլ կընկնեն փորձանքի մէջ։ Շուտով մի մարդ ուղարկիր, որ գտնէ նրանց և ասէ, որ մի տեղում պահվին և, սպասեն իմ կարգադրութիւններին։

Վերջին խօսքերը ասելի խոր խոցեցին խեղճ կնոջ սիրտը. ուրեմն իր սիրելի ամուսնին ևս վտանգ էր սպառնում, մտածեց նա, նա ինչով էր մեղաւոր, նա ինչ էր արել...Բայց Սաառն ախքան խելացի էր, որ նրանից ծածուկ չէին կարող մնալ իր ամուսնի մի քանի դիտաւորութիւնները, որոնցից նա միշտ ցաւալի հետեւանքներ էր սպասում։

—Ո՞վ կը գնայ....հարցրեց կինը վշտալի ձայնով և նրա բազմանոց աչքերը կրկին լցվեցան արտասուքով։

Սաառի հարցմանքը անտեղի չէր։ Վտանգի ժամանակ երբ եղբայրը եղբօրը ուրանում է և մինչև անգամ նրա դէմ թշնամանում է, էլ ուրիշների վրա ինչ յոյս կարելի էր դնել...Սաառն իր ականջով լսեց, թէ քանի ոսկէ առաջ Հայրապետի եղբայրները որպիսի բարկութեամբ էին խօսում նրա մասին, և որքան զրոյցված էին նրա դէմ։

Ներունին հասկացաւ Սաառի արդար զժգոհութեան պատճառը և տխրութեամբ պատասխանեց նրան։

—Ես գիտեմ, որ ոչ ոք չի գնայ....ես գիտեմ, որ վտանգի ժամանակ բոլորը կը հեռանան մեզանից...Բայց վարդանի երկու ծառաները՝ Սաքօն և Եղօն տանն են, դրանք համարձակ մարդիկ են և հաւատարիմ, Շտապիր չուտով հասցնել նրանց գործի եղելութիւնը, իսկոյն նրանք կը գնան՝ կը գտնեն Հայրապետին, Ագօին և Վարդանին, և ինչ որ պէտք է՝ կը յայտնեն նրանց։ Բաւական է, որ ասեն թէ պ. Դուզուկէանը կալանաւորված է և մեր տան մէջ խուզարկութիւն արին,—մնացածը նրանք կը հասկանան։

Վերջացնելով իր պատուէրները, ծերունին դուրս եկաւ կանանոցից, համոզված լինելով, որ խանում և խելացի Սաառն բոլորը կը կարգադրէ իր ցանկութեան համեմատ։

Բակում ծերունին նկատեց, որ կառավարութեան, կարգի, օրէնքի և արդարութեան ներկայացուցիչները—գինուորները, վայելելով գիւղացու սեղանի առատ բարիքները, խմելով նրա գինին և արաղը, այժմ ներկայացնում էին անկարգութեան մի ամբողջ բաբելոն։ Դա այլերը խփեց և անցաւ։ Դա չը կամեցաւ տեսնել բացարձակ լրբութիւնը, որ պատժել չէր կարող։

Թուրք ծառայողները չատ չեն հեռանում իրանց կրօնի պատուէրներին, այս պատճառով արաղի գործածութիւնը նրանց մէջ բոլորովին սովորական է դարձել։ Արգելված պտուղը քաղցր է լինում։ Մահմեդականը խմելու ժամանակ զգալն է զառնում. արբեցութիւն բերկրանքը նրա մէջ փոխվում է կատաղի մոլեգնութեան։ Եթէ մի պատճառ կար համարել Մուհամէդին մարգարէներից ամենամեծը, այդ էլ բաւական է, որ նա արգելեց մուսուլմաններին խմել ոգելից ըմպելիներ։

Մի և նոյն ժամանակ օդագի մէջ խօսակցութիւնը ոչ սակաւ հետաքրքիր էր։ Ցիմնապետը բաւական խմեց, և ճաշից առաջ նրա Լիֆէնդու հետ ունեցած պարտական խօսակցութիւնը, այժմ աւելի մտերմական, աւելի ընկերական ձև էր ստացել։

—Քանի կնիկ ունես, հարցրեց ցիմնապետը։

Լիֆէնդին, մի անտարբեր ժպիտ գործելով իր պլանգակ դէմքի վրա, պատասխանեց.

—Ութից հարցրին քանի կնիկ ունես,—նա ցոյց տուեց ամբողջ նախիրը։»

Երբ Լիֆէնդին տեսաւ էր Էշերի առաջներով պատպայտել իր միտքը, դա արդէն նշան էր, որ նա գտնվում է իր սրտի ամենաուրախ տրամադրութեան մէջ։

—Բայց քրիստոնեաներին, կարծեմ, արգելված է մէկից աւելի ունենալ, նկատեց ցիմնապետը։

—Մահմեդականներին նոյնպէս արգելված է գինի և արաղ խմելը, իսկ դուք ինձանից աւելի խմեցիք, պատասխանեց Լիֆէնդին, ուրախանալով իր յարմար պատասխանի վրա։

Այդ միջոցին ներս մտաւ ծերունին խաչն, իր ձեռքով բերելով երկու տուփերի մէջ դարսած ռահաթլէխումը և Զմիւռնիայի թուզ, և դրեց սեղանի վրա, ասելով.

—Ձաչից յետոյ լաւ է լինում բերանը մի բանով քաղցրացնելը։

Նա կրկին շտապով դուրս գնաց օդագից։

—Բաւական բարի մարդ է երևում այդ ծերունկը, խօսեց ցիմնապետը նրա հեռանալուց յետոյ,—ես զարմանում եմ, թէ ինչպէս է թողել դա իր տանը այնպիսի մարդերին, որպէս ռուսացի լրտեսը, կամ որպէս պոլսցի խուլարարը։

—Էշի սանձերը երկար են լինում, բայց խելքը կարճ», պատասխանեց Լիֆէնդին իր յատուկ ոճով։—Եթէ կան աշխարհում ցիմար մարդիկ, դրանք այդ «բարի» կուլմծներն են։ Այդ ծերուկը նոյն տեսակներից է։

Թուրք ցիմնապետը համեմատաբար աւելի ազնիւ զգացմունքի տէր մարդ էր, քան հայ Լիֆէնդին։ Նա ասաց ցաւակցաբար.

—Ես կարծում եմ, որ մեր զինուորական նոր գործակատարը այդ խեղճին լաւ կը կթէ...

—Ցարակոյս չը կայ.... Անխելք պէտք է համարել այն մարդուն, որ չի ուշադրի մի այսպիսի բարեբեր կովից օգուտ քաղել...

—Դու ճանաչում ես նրան, ինչպէս մարդ է, ես առաջին անգամն եմ տեսնում։

—Շատ լաւ եմ ճանաչում, պատասխանեց Լիֆէնդին գործակից մարդու եղանակով.— ես նրան ճանաչում եմ դեռ այն ժամանակից, երբ Տիգրանակերտի գաւառում գայմգամ էր։ Ցանն տարուց աւելի կողոպտեց, հարատարաւ, յետոյ Պոլիս գնաց և ամենքը փաչայ դարձաւ։

—Ինչպէս մարդ է։

—Ամենքից էշ է պտռում նաչերը դուրս քաշելու համար»...

Մինչ Լիֆէնդին և ցիմնապետը զբաղված էին այս տեսակ խօսակցութիւններով, մինչ զինուորները արբեցութեան մոլեգնութեան մէջ երգում էին, հռհռում էին և պար էին գալիս, ծերունուան կնիկները իրանց երեխաների ձեռքից բռնած, ուսն ետեւի գնով գլխում էին դէպի իրանց ծնողների տները։ Արտասուքը հեղեղի նման թափվում էր այդ թշուառների աչքերից, որոնց ոչ պէս էր թուում, թէ դէպի գերութիւն են տարվում, թէ պէտք է միւս անգամ չը տեսնեն այն տունը, ուր այնքան բախտաւոր էին, ուր այնքան սիրված էին։

Այդ միջոցին Լալան և Սաքօն, երկուսն էլ դուռնաբված, դուրս եկան նոյն գնից, և նստելով ձիերի վրա, հեռացան։ Թօմաս Լիֆէնդին իր բոլոր սաստանական խորամանկութեամբ չը մտածեց կալանաւորել տալ այդ երկու աւազակներին, որոնք Վարդանի թև ու թիկունքն էին, որոնք կարող էին խանգարել նրա չար դիտաւորութիւնները...

(Կը չարունակվի)

Բ., Իվանովա Մարտիրոսով 1 բ., Խաչատուր Շահ-բ., Գէորգ Խաչերցիով 2 բ., Մարգիս Չալաբեան 5 բ., Գուսարն է 501 բուրլ։ Պ. Գաբրիել Խալայճեան վճարեց փոստի ծախս 3 բուրլ։

Ստեփան Տէր-Կարապետեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆՑԻ

—

Մարտի 14-ին

Հանգիստով Վան քաղաքի մեր ազգայնոց, որոնց կեանքը մի բազմաչարչար նահատակութիւն է անիրաւութեամբ, Աստրախան քաղաքի հայ կրթասարերներն ըստ չափու կարողութեան հանգանակեցին իրանց նուէրներն յօգուտ այդ թշուառաց։ Մեր հանգանակած 1100 բ. յոյս ունենք, ըստացած է «Մշակի» խմբագրութիւնը։

Ահա այս նամակի հետ ուղարկում ենք մեզ և նորիրատուների ցուցակը։

Ստեփանոս Գալստեան Ջանումեանց 100 բ., Եղբարք Գոստինցեանք 100 բ., Յարութիւն Սարգսեան Իւանեանց 50 բ., Օհան Ֆրանգուլեանց 50 բ., Ոմն անյայտ 50 բ., Մկրտում Դանիէլեան Սարգսեան 50 բ., Մկրտիչ Հաճիսրդեան 50 բ., Մարգարիտ Կարապետեան Սողոմոնեան 25 բ., Իլայ Մատաթեանց 25 բ., Ազէքսանտր Փարսամեան 25 բ., Եղբարք Սուրբաբէկեանք 25 բ., Գրիգոր Արէլեանց 25 բ., Սիմէոն Կազարէկեանց 25 բ., Յովհաննէս Սարգսեանց 25 բ., Յովսէփ և Աւետիս Աստուրեանք 20 բ., Աբէլ Զիրիկեան 15 բ., Արարատ Փասոյեանց 15 բ., Զաքարս Եղեան և եղբարք 15 բ., Աստուածատուր Իկնաղեանց 15 բ., Գասիլ Յարութիւնեան Ֆրանգուլեանց 15 բ., Եղբարք Ց. և Մ. Թելչիեանք 15 բ., Եղբարք Ղիժանք 15 բ., Մարգարիտ Մադաթեան 10 բ., Անյայտ ոմն 10 բ., Գրիգոր Ֆրանգուլեան 10 բ., Մարգիս Թելչիեան 10 բ., Դաւիթ Կիրէյեան 10 բ., Եղիսաբէթ Ալիմէրդեան 10 բ., Սոսիփանոս Մարտիրոսեան Պողով 10 բ., Սիմէոն Մարտիրոսեան Պողով 10 բ., Թադուհի Մեհրապեան 10 բ., Եղիսաբէթ Ուլուխանեանց 10 բ., Սահականոս Սուլթանեանց 10 բ., Անյայտ ոմն 10 բ., Կատարինէ Ցոմանենսեան Մադանդարեանցեան 8 բ., Եղբարք Զուրաբէգեանք 6 բ., Ս. Պ. Սերերբեկեան 5 բ., Ա. Բերիմանեանց 5 բ., Եղիսաբէթ Ֆրանգուլեան 5 բ., Աստուածատուր Բարսեան Աստուրեան 5 բ., Անյայտ ոմն 5 բ., Եղիսաբէթ Տէր-Զաքարեան Պողով 5 բ., Հ. Խլեբնիկով 5 բ., Յակոբ Արզարեանց 5 բ., Կատարինէ Թելչեան 5 բ., Ազէքսանդր Մուրզուլեան 5 բ., Եղիսաբէթ Գալստեան Մարտիրոսեան 5 բ., Խաչատուր Աւետեան Լալայեանց 5 բ., Անյայտ ոմն 5 բ., Անյայտ ոմն 5 բ., Անյայտ ոմն 5 բ., Վ. Արէլեանց 3 բ., Յովհաննէս Կիտայեան 3 բ., Ն. Օրլով 3 բ., Ն. Ֆեդորով 3 բ., Լ. Կուզնեցով 3 բ., Неизвѣстный 3 բ., Никифоръ Ильинъ 3 բ., Անյայտ ոմն 3 բ., Խաչատուր Արզարեան 3 բ., Ց. Ց. Արզարեան 3 բ., Դաւիթ Բաբիրեանց 3 բ., Սիմէոն Սորոլեանց 3 բ., Գասպար Սարգսեանց 3 բ., Յակոբ Միմէոնեան Սամուրզուլին 3 բ., Յովհաննէս Սոսիփանեան 3 բ., Կարապետ Ֆրանգուլեանց 3 բ., Պետրոս Պողով 3 բ., Գրիգոր Յովակիմեան Բայեանց 3 բ., Մարիամ Ադէլեան 3 բ., Մկրտիչ Բոզպեան 3 բ., Պետրոս Աւանչեան Պողով 3 բ., Հովսեփ Հարութեան 3 բ., Яковъ Ивановъ Комовъ 3 բ., Սահակ Ամիրանեան Բուրչուլեանց 3 բ., Կարապետ Ցարմանեանց 3 բ., Նազար Սահրատեան 2 բ., Անյայտ ոմն 2 բ., Կարապետ Ջիմիտեանց 2 բ., Թադէոս Ջերքեզեանց 2 բ., Խաչատուր Դաղաչեանց 2 բ., Ոսկի Մուրզուլեանց 2 բ., Փիլիպոս Մազանդարանցեանց 2 բ., Յովհաննէս Կազմինցեան 1 բ., Յովսեփ Աբրահամեան Քալաչեանց 1 բ., Դաւիթ Գաբրիէլեանց 1 բ., Խաչատուր Բաբիրեանց 1 բ., Մարգարիտ Կալէչեանց 1 բ., Սարգիս Պողոսով 1 բ., Սարգիս Թարիրեանց 1 բ., Երկու անձինք 1 բ., Անյայտ ոմն 1 բ., Անյայտ ոմն 1 բ., Աստուածատուր Սուփասեանց 1 բ., Զաքարիա Զուրաբեան 1 բ., Մակար 1 բ., Գէորգ Լէնինեանց 1 բ., Անյայտ ոմն 1 բ., Սահականոս Նազարեանց 1 բ., Յովհաննէս Սորոլեանց 1 բ., Անյայտ ոմն 1 բ., Հովսեփ Պիրէյեանց 1 բ., Մանկուկ Լեխանեանց 1 բ., Անյայտք 1 բ. 50 կ., Անյայտ ոմն 50 կ., Մկրտչէ Սարգսեան 10 բ., Յովհաննէս Ս. Սոլոմոնեանց 3 բ., Ն. Ив. Шавердовъ 4 բ. Աղվանեանց 1 բ., Մելքում Բաղանուսեանց 5 բ., Մարիամ Շահնազարեան 1 բ., Զաքար Կալուստեան Սիլիտիկեան 2 բ., Յովհաննէս Սարգ. Եւանեանց 1 բ., Մկրտչէ Պողոսիան 1 բ., Անյայտ ոմն 1 բ., գումարն է 1100 բ.

Մարտիրոս Կարապետեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, ապրիլի 7-ին

Ցաւոտի է Թիֆլիսի հայ հասարակութեանը, որ մշական խմբի դերասան պ. Ադամեանը, որը վարձված էր թատրոնական կոմիտէի կողմից ամբողջ ձմերային ժամանակամիջոցի համար, դեռ ժամանակը չը լրացած, թողից բեմը և այդ եղաւ գլխաւորապէս տանուտեան պատճառը, որը տիրեց մեր հանդարտութեանը դէպի հայկական թատրոնը, ուր նա պիտի ընդունում էր մ.չտ իր սիրած դերասանին։ Այս կարծիքիս հաստատելու փաստ կարող է լինել այս ամսի 3-ին նրան ցոյց տուած հանդիսութիւնը։ Թէ ինչ էր պատճառը, որ պ. Ադամեանը հրաժարվեցաւ իր պայմանագիրը կատարելուց, այդ արդէն լաւ յայտնի է հասարակութեանը։

Մի կողմը թողնելով այդ պատճառը և այն հարցը, թէ արդեօք պ. Ադամեանի և կոմիտէի անդամի մէջ պատահած տարաձայնութիւնը, որ ծագել էր թատրոնի բեմի վրա և թատրոնական գործի պատճառով, պէտք է լինէր կոմիտէի և ժողովի քննութեան առարկայ և թէ ունէր արդեօք իրաւունք պ. Ադամանը այդ տարաձայնութիւնի պատճառով հեռանալ թատրոնից, թողնելով, առումիմ, այս բոլոր հարցերը, որոնց մասին հասարակութիւնը զանազան կարծիքի է, ես կամենում եմ դարձնել թատրոնական ժողովի և կոմիտէի դիրեկտորների ուշադրութիւնը այս բոլոր հարցերի սկզբնապատճառի վրա, որ կախված է գլխաւորապէս այն յարաբերութիւններից, որոնք այդ-պիսի գործի մէջ, օրինակի համար, թատրոնի, որտեղ աշխատում են շատ և զանազան դերեմեան և դերերի տէր մարդիկ, պէտք է լինեն որոշված, որքան կարելի է ամենաճշդ կերպով։ Այսպիսի գործի մէջ, եթէ ուզում ենք, որ նա առաջ գնայ, նրա ամեն մի ախատակցի դերը, լինի նա դերասան կամ թէ կոմիտէի անդամ, պէտք է որոշապէս և բացարձակ ցոյց տուած լինի մի կանոնադրութեան մէջ, որ լինէր հաստատած ժողովի հաւանութեամբ և որին պարտաւոր լինէին ենթարկվել թէ դերասանները և թէ թատրոնի միւս ախատակիցները, ամենը իր պաշտօնի մէջ։ Ահա այսպիսի կանոնադրութեան բացակայութեան մէջ ենք տեսնում բոլոր այն չփոթների պատճառը, որ այդպիսի ցաւալի ընթացք տուեց այս գեղեցիկ և գեղեցիկ կերպով սկսված գործին, որին մեր քաղաքի հասարակութեան միւս մասերը պիրով նախանձում էին և որի անկմանը, ցաւելով պէտք է խոստովանենք, այժմ զուցէ, ծափահարում են արդարապէս մեզանից դրելով մեզ, հայերիս, մեր և կարծես թէ միայն մեզ պատկանված ախտի մէջ —անմիաբանութեան....

Այս կանոնադրութեան չունենալն էր պատճառը, որ թատրոնին գործակցող ամեն մարդ իրան իրաւունք էր տալիս խառնվել ուրիշի գործի մէջ, նոյնպէս և այդ էր պատճառը, որ, ինչպէս լսել ենք, և դերասանները չատ անգամ կամակոր են եղել, իրանց կապրիզներն են ուզեցել առաջ տանել։ Թատրոնը արհեստի տաճար է, նրան պէտք է չարդել և նոյնը պէտք է լինի որ և է տնտեսական կամ մասնաւոր գործերի տեղ։ Այս բոլոր բաների վրա հսկողը պէտք է լինի հաստատ կանոնադրութիւն, որի մէջ պարզ և որոշ կերպով ցոյց տուած լինեն թատրոնի բոլոր ախատակիցների յարաբերութիւնները, պարտաւորութիւնները և իրաւունքները։ Այս ամենը առաջել ևս ցանկալի է մանաւանդ այժմ, երբ թատրոնը, ինչպէս տեսնում ենք, դառել է մեզ համար մի անհրաժեշտ հարկաւորութիւն։ Մենք միւս կողմից կարծում ենք մինչև ազգամ առաջ ևս նպատակայարմար կը լինէր, այդ կանոնադրութիւնը կազմելու և ժողովի հաւանութենից յետոյ ներկայացնել բարձր իշխանութեանը հաստատելու համար։

Մենք լսել ենք, որ վերջին ժողովում կանոնադրութեան մասին արդէն զարթեցրել են հարց, թէ խուլ կերպով, բայց մինչև այժմ սորա մասին ոչինչ կարգադրութիւն դեռ չէ արած։ Այս պատճառով մենք կարծում ենք, որ լաւ կանէր կոմիտեները եթէ չուտով հրաւիրեր ընդհանուր ժողով լրագրների մէջ տպելով յայտարարութիւն և ներկայացներ այս հարցը նորա վճռին։ Այդ ժողովում մի և նոյն ժամանակ կարելի է վերջ տալ այն տարակուսանքին, որ եղաւ պատճառ պ. Ադամեանի հեռանալուն։ Մենք յոյս ունենք, որ և պ. Ադամեանը, ինչպէս խելացի մարդ և հաստատակամ իր վճռի գործին և երախտագէտ դէպի հասարակութիւնը, տեսնելով, որ թատրոնական գործը մեզանում տանալու է կանոնաւոր ընթացք և դրած կը լինի հաստատ հիմի վրա, ուրախութեամբ կը համաձայնվի չարունակել իր օգտակար գործունէութիւնը մեր բեմի վրա, որով նա սառաւել ևս գրաւած կը լինի հասարակութեան սէրը և համակրութիւնը։

Ս. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաստատ ապրիլից լսում ենք որ Գաբրիել Սունդուկեանցը հրաժարվել է հայ թատրոնական մասնաժողովի անդամակցութիւնից։

—

Պ. Ա. Միրզոյեվ, որ ունի ԹԻՖԼԻՍՈՒՄ նկարչութիւնների թանգարան, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Շիրեանի տանը, այժմ բաց է անում այդ թանգարանը յօգուտ հայ սովատանջների, նշանակելով մուտքը 20 կոպէկ։ Ժողովարանի մէջ գտնվում են ամենանշանաւոր նեղինակների նկարչութիւնները։ Թանգարանի մէջ ընդունվում են մասնաւոր պատիրներ։ Թանգարանը կարճ ժամանակ բաց կը լինի։

—

ԴՊԼԱՐԻՑ մեզ գրում են. «Այստեղ հոգիս անցկացաւ երկար ձմեռը, և յանկարծ դարձեալ ապրիլի 2-ին եղանակը ցրտեց և սկսեց ձիւն գալ։»

—

ԹԻՖԼԻՍԻ վանքի մայր-եկեղեցու ուսումնական ցուցանենց Տէր-Զորոսեան Սարգսեանց յանձնեց «Մշակ» լրագրի խմբագրութիւնը յօգուտ Վանի սովատանջների 50 բուրլի իր սիրատակ իր հանգուցեալ ամուսնու Իշխանունի Քալի Բէգիմբէկեանց և իր որդու Գէորգի։

—

Ապրիլի 8-ին պ. Ադամեան մի կենդերտ տուեց Աղբրունու թատրոնում։ Մասնակցում էին տիկին և պ. Դէկէր-Շենկ, տիկին և պ. Տէր-Գրիգորեան, պ. պ. Եղեկեան և Մէսսիթ։ Թատրոնը թէև լի չէր, բայց ներկայ էր Թիֆլիսի ընտրված հայ հասարակութիւնը։ Ադամանը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ հասարակութեան կողմից։ Նրա կարգացած ոտանաւորներից ամենասրտի տպաւորութիւն գործեց Գամառ-Բաթիպայի նոր բանաստեղծութիւնը «Մեծն» վերնագրով։ Երկրորդ բաժնում «Ընտանեկան օջախ» վոդեվիլը, որ չատ աջող փոխադրութիւն է ռուսերէնից, բաւական աջող կերպով խաղացվեցաւ։ Մէսսիթ ծիծաղեցրեց հասարակութիւնը իր վրացերէն պատմութիւններով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ հեռաւոր տեղեկութիւններ ենք կարդում անգլիական պարլամենտի անդամների ընտրութիւնների մասին։

Զորեքշաբթի, ապրիլի 7-ին անգլիական ազատամիտ կուսակցութիւնը պահպանողականներից 74 տեղեր առելի պէտք է ունենար, եթէ մինչև անգամ ենթադրենք, որ նոքա գիւղական շրջաններում միայն մի մի տեղ աշխատեցին։ Նոր պարլամենտի անդամների թիւը չորեքշաբթի օրը հեռաւոյ կերպով էր բաժանված. 290 ազատամիտներ, 163 պահպանողականներ և 35 իրլանդացի ավտոնոմիստներ։ Այսպիսով եթէ պահպանողականները միանային իրլանդացի ավտոնոմիստների հետ, նոքա պարլամենտի մէջ կունենան ընդամենը 198 ձայներ, իսկ ազատամիտները՝ 92 ձայների մեծամասնութիւն։ Եթէ ընդունենք, որ հեռաւոյ ընտրութիւնների ժամանակ այդ մեծամասնութիւնը քչանայ 35 կամ 40 ձայներով, այնու ամենայնիւ ազատամիտները նոր պարլամենտի մէջ ձայների առելի մեծ բազմութիւն կունենան, քան թէ առաջվայ պարլամենտի մէջ պահպանողականներն ունէին։

Անգլիայում ոչ ոք չէր հաստատում ընդդիմադրական կուսակցութեան այսպիսի կատարելյալ յաղթութիւնը։ Ազատամիտները 20 ձայների բազմութիւնից առելի յոյսեր չունէին։ Ազատամիտ կուսակցութեան անդամներից շատերը այդքանի էլ չէին սպասում։

Մանաւանդ նշանաւոր է այն իրողութիւնը, որ միայն քաղաքների բնակիչները չանչ ազատամիտների կողմը, գիւղական ընտրողները նոյնպէս սկսեցին ձայն տալ յօգուտ ազատամիտների։ Երկրագործները չատ սպասեցին որ պահպանողական կուսակցութիւնը պատանկանող կալուածատերերը բարեյաջէին նրանց գրութիւնը։ Նոքա այժմ հաւատացած են, որ հէնց որ կառավարութիւնը ազատամիտների ձեռքը ընկնի, նոքա կը սկսեն բարեյաջել երկրագործների վիճակը։

Առհասարակ Գլադստոնը կարող է բաւական լինել։ Նա Բիրմինգիմից փառաւոր վերջ առաւ 1874 թուականի յաղթութեան համար։ Ազատամիտները այնպիսի հանգամանքների ժամանակ յաղթեցին, որոնք այդ յաղթութիւնը առանձին նշանակութիւն են տալիս։

Վեց տարի սրանից առաջ Անգլիան կատարեալ հանգստութիւն և բարօրութիւն էր վայելում։ Անգլիական հպատակները եկամուտից ոչինչ տուրք չէին վճարում կառավարութեանը։ Ազատամիտ կուսակցութեան սկսած ձեռնարկութիւնները բոլորը վերացրած էին։ Ընտրողները պէտք է չը ցանէին, որ իշխանութիւնը անցնում էր պահպանողականների ձեռքը, որոնք ազատամիտների խելացի կառավարութեան պտուղները պէտք է քաղէին։ Այդպիսի պայմանների ժամանակ համարձակ կարելի էր ուրախացնել ազգային ինքնասիրութիւնը Բիրմինգիմի փայտերական քաղաքականութեամբ և նրա ձգտումներով վերադարձնել Անգլիային «գերակշռող դերը Եւրոպայի խորհուրդների մէջ։»

Այժմ գործերի դրութիւնը բոլորովին ուրիշ է։ Ազատամիտները սկսեցին պատերազմել պահպանողականների հետ այնպիսի ժամանակ, երբ պահպանողական միտիստութիւնը իր ձեռնարկութիւններից ոչ մէկը բարեյաջող վախանի չէր հասցրած և երբ այդ ձեռնարկութիւններին բոլոր համակրողները պէտք է հաւատացած լինէին, որ ազատամիտները նրանց չէին շարունակի։ Զը նայելով այս համոզմանքին անգլիացիների մեծամասնութիւնը ձայն տուեց յօգուտ Բիրմինգիմի հավատակորդների։

Այսու հետև ազատամիտ կուսակցութիւնը կարող է հաւատացած լինել, որ նա պէտք է չը ոգայ իր «գոյութեան» համար։ Այդ միտիստութիւնը կարող է համարձակ իրագործել այն արտաքին քաղաքականութիւնը, որի նախագիծը կար մարիզ հաղորդումների ընտրողական շրջաբերականի մէջ։ Անգլիայի քաղաքական կեանքը մանում է բոլորովին նոր շրջանի մէջ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՇԱՆԽԱՅ, 8 ապրիլի։ Իշխանների և բարձր ատիճանաւորների մասնաժողովը վճռեց, որ Զանխուռ բանտի մէջ գցվի մինչև աշունքը և յետոյ գլխատվի։ Ընդհանուր կարծիքը ընդդեմ է Կուլջայի դաշնագրին։ Ամեն տեղ պատերազմական տրամադրութիւն է տիրում։ Տեղացիների մէջ լուր է տարածված, իբր թէ Զանխուռ ինքնասպանութիւն է գործել։

ԹԷՀԵՐԱՆ, 8 ապրիլի։ 2000 հեծեալ և 700 հեծելազօրք ուղարկված է Խորասան պարսկական սահմանական զօրքերին ուժեղացնելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Բիագնեան նահանգապետ Արաքա նշանակված է տպագրական գործերի վերաբերեալ գլխաւոր վարչութեան մեծաւոր։

ԼՈՆԴՈՆ, 9 ապրիլի։ Նոր կարինէտի կազմելը յանձնված կը լինի Հարտինգտոնին։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՐՈՒՆԻ